Երեւան, Աղէքսանդրապոլ, Ախլցխայ են։ 1893 և 1894 թուերի ձմեռները մնացի Բաղու եկեղեցական սենեակներումն, բայց մեծ նեղութեամբ։ Այս մասին բաղուեցիք դեռ մտածում են, և ի հարկ է մի օր կը պատրաստեն մի յարմար և վայելուչ առաջնորդարան, երբ թեմական դպրոցը և թեմական ատեանը կը փոխադրուեն Բաղու, որոց համար արդէն (1894) շարունակւում է դրագրութիւնը առաջնորդի և կաթուղիկոսի մէջ։

Ճամախին եւս չունի առաջնորդարան ոչ յարմար և ոչ անյարմար, ինչպէս յիշել եմ դրքիս մէջ. բնակւում ենք մեծապատիւ Եագօր Իւանիչ Քալանթարեանցի շնորհած բաւական վայելուչ բնակարանումն 1888 թուի օգոստոսից ձրիապէս՝ օրհնելով Եագօր Իւանիչին և ընտանեացն, և մաղթելով նոցա ծընողաց և ազգականաց հոգւոց փրկութեան համար։

Ցարգոյ Լալայեան եղբարք Ճամախեցիք — պարոն Աղէքսանդրն և պ. Բալաբէկն խոստացել են և պատրաստ են Ճամախւոյ հին եկեղեցւոյ միայն սեղանոյ տեղումն մի չափաւոր մատուռ շինել՝ այն եկեղեցւոյ յիշատակը պահելոյ համար, իսկ նորա պարսպի մէջ շինել առաջնորդարանը և նորա մօտ շինել ազգային հիւրատուն, ուր կարողանան օտարական հիւրերը, հոգեւորականք և աշխարհականք պատսպարւել։ Ստուած կատարումն տայ յարգոյ Լալայեան եղբարց բարի նպատակին, որ մեծ պատիւ կը բերէ թէ Ճամախեցւոց և թէ ընդհանուր ազգին։